

ՎՐԹԱՆԵՍ ՓԱՓԱՂՅԱՆԸ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱՐԱՆ

Լ. Գ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Վրթանես Փափաղյանի «Պատմություն հայոց գրականության» աշխատությունն ամբողջական մի պատմություն էր, որ չէր ունեցել իր նախորդը նյութի ընդգրկման տեսակետից: Աշխատությունը գրվել է 1907 թ., այնուհետև վերահրատարակվել է 1910 թ., հեղինակի կողմից ենթարկվելով որոշ փոփոխությունների: Հետագայում եղել են գրքի ես մի քանի հրատարակություններ, որոնցից վերջինը՝ 1934 թ. Պոլսում: Երկար տարիներ օգտագործվելով իբրև դասագիրք, այն պահպանել է իր պատմական արժեքը և հետաքրքրություն է ներկայացնում տվյալ ժամանակաշրջանի հայ մշակույթի պատմությունն ուսումնասիրողների համար:

Փափաղյանը հեռու է մնացել պրոլետարիատի հեղափոխական շարժումներից, բայց նրան գրավել է «ամբոխի» ըմբոստ ու անհաշտ ոգին: Նա չէր տեսնում այդ «ամբոխի» գիտակցական հզոր շարժումը, նրա գահակործան ուժը: Փափաղյանի աշխարհայացքի այս հակասությունը որոշակի արտահայտություն գտավ նրա պատմագիտական մեթոդում և հիմք դարձավ մի շարք ոչ ձիշտ, հակապատմական դրույթների: Այդ դրույթներն էին, որ ժամանակին արժանացան Ստ. Շահումյանի խիստ քննադատությանը: Բացահայտելով Փափաղյան-պատմաբանի բուրժուական նախապաշարմունքները, Շահումյանը գրում է. «Եվ այսպես, ամբողջ հայ պատմությունն ըստ մեր պատմաբանների, ներկայացնում է ոչ այլ ինչ, եթե ոչ բարի ու չար հրեշտակների կռիվների, մի կողմից՝ ազգասեր ու առաքինի հայ թագավորների, իշխանների և մյուս կողմից՝ ազգուրաց, ազգի դավաճան թագավորների, իշխանների կռիվների պատմություն... Եթե չլինեին ներքին «երկպառակությունները», «դավաճանությունները», հայ ազգին ոչ ոք չէր կարող դիպչել և նա կապրեր իր բարի հրեշտակ թագավորների ձեռքի տակ գոհ ու երջանիկ»¹:

Շահումյանի արդարացի քննադատությունը տեղին էր: Փափաղյանի սխալները պատահական բնույթ չունեին: Նրանց հիմքում ընկած էին հեղինակի աշխարհայացքի սահմանափակությունը, մանր բուրժուական պատմահայեցողությունը, որոնց ազդեցությունը նկատվում է նաև «Պատմություն հայոց գրականության» ուսումնասիրության մեջ: Սակայն դրանով հանդերձ այդ աշխատությունը կարևոր երևույթ էր հայ գրականության պատմագրության զարգացման մեջ, այն ընդգրկում էր ամբողջ հայ գրականությունը՝ սկզբից մինչև XIX դ. վերջը:

Աշխատության՝ կոնկրետ գրականագիտական հարցերի լուծմանը վերաբերող արժանիքները մինչև այժմ պատշաճ ուշադրության չեն արժանացել:

Մեր խնդիրն է այստեղ ցույց տալ Վրթանես Փափաղյանի դերը հայ գրականության պատմագրության զարգացման գործում, գրականության նախորդ պատմությունների համեմատական ուսումնասիրության օգնությամբ վեր հանել այն նորը, որ բերեց նա իր աշխատությամբ, ինչպես նաև քննել նրա գրքում հանդիպող վիճելի տեսակետներն ու կարծիքները:

«Պատմությունը» կազմված է 5 մասից՝ ժողովրդական բանահյուսություն—գրավոր բանահյուսություն (հին շրջան), միջին դար, միջնադարյան բանաստեղծներ, նոր շրջան (XVII դ.—XIX դ. սկիզբը), նորագույն շրջան: Վերջինս իր հերթին բաժանվում է երկու մասի՝ ռուսահայ և թուրքահայ գրականություն: Գրքի վերջում հավելվածի ձևով տրված են նմուշներ ժողովրդական, հին և միջնադարյան բանահյուսությունից:

Գրականության պատմության իր պարբերացումը կատարելիս Փափաղյանը ղեկավարվել է գրականությունը պատմական զարգացման ընթացքի մեջ դիտելու սկզբունքով: Նրա պարբերացմուն առանձին մասերը ենթադրում են որոշակի պատմական ժամանակաշրջանի արդյունք հանդիսացող գրականության զարգացման փուլեր: Իր «Պատմության» փոքրիկ առաջաբանում Փափաղյանը գրում է. «Գրականության զարգացման պատմությունը արված է հնար եղածին չափ քաղաքական կյանքի ընթացքի պատմության հետ՝ ղուգընթացաբար»²:

1 Ստ. Շահումյան, Գրականության մասին, Երևան, 1948, էջ 153:

2 Վրթանես Փափաղյան, Պատմություն հայոց գրականության, Թիֆլիս, 1910, էջ 6:

«Պատմության» կարևոր արժանիքներից է հեղինակի կողմից «մատենագրություն» և «բանահյուսություն» բնորոշումների որոշակի տարբերակումը: Ժողովրդական բանահյուսության համակողմանի և հանդամանալի ուսումնասիրությունը ամբողջական է, ուշագրավ՝ փաստերի հարստությամբ և բանահյուսական երևույթների ու հասարակական զարգացման կապի բացահայտմամբ:

Հայ հին գրականության պատմությունը Փափազյանն սկսում է ամենավաղ ժամանակներից: Հետաքրքրական են Փափազյանի դիտողությունները քրիստոնեության մուտքի, նրա շարժիչ ուժերի ու հետևանքների մասին: Քրիստոնեական գրականությունը հեղինակը բաժանում է երկու մեծ խմբի՝ կրոնական բանաստեղծություն և պատմական գրվածքներ: Որոշակի սահման դնելով գեղարվեստական և պատմական գրվածքների միջև, Փափազյանը երկուսի վրա էլ տեսնում է կրոնական ուղղության դրոշմը, թեև, պետք է նշել, որ դա չի խանգարել հեղինակին ըստ արժանվույն գնահատելու դրանք:

Փափազյանը ճիշտ է ըմբռնել հայ գրերի գյուտի պատմական դերն ու նշանակությունը: Քաղաքական կյանքի հստակ նկարագիրը, որը նախորդում է գրերի գյուտի քննությանը, և որով պայմանավորված է այդ խոշոր երևույթի ի հայտ գալը, խոսում է հեղինակի պատմաքննական մեթոդի մասին:

Ուշագրավ են գրականության պատմության դիտողությունները գրաբար լեզվի մասին: Նա կտրականապես հերքում է այն կարծիքը, ըստ որի գրաբարը մի շինծու լեզու է կամ արքունիքում միայն գործածական՝ «Այս ենթադրությունը մի խոշոր սխալ է, որովհետև շինծու լեզուն չի կարող այն աստիճան զարգանալ, որ դարերով դառնա մի ազգի գրական լեզուն և որովհետև լեզուն չի շինվում երբեք, այլ եղածը կանոնավորվում, վերանորոգվում ու մշակվում է միայն»³: Պետք է ասել, որ նա առհասարակ մեծ տեղ է տալիս լեզվի դերին ու նշանակությանը: Արդեն VII դարի սկզբներից նա տեսնում է մեծ տարբերություն գրաբարի և խոսակցական լեզվի միջև, իսկ XII դարի մասին նշում է, թե նույնիսկ գրողներն էլ ժողովրդին հասկանալի լինելու համար սկսում են գրել «ռամկորեն»: Փափազյանը ճիշտ էր ըմբռնել հայոց լեզվի բնականոն զարգացման ընթացքը, որը հետագայում հիմք պետք է դառնար աշխարհաբարի ծագումն ու զարգացումը բացատրելու համար: Նրա գրականագիտական նուրբ ճաշակի ու հմտության մասին են խոսում Կորյունի, Եզնիկ Կողբացու, Եղիշեի և մյուս պատմիչների գնահատումները: Հակառակ գրականության նախորդ պատմաբանների, Փափազյանը երկի արժեքավորման չափանիշ է վերցնում գեղարվեստականությունը և այդ տեսանկյունից էլ բարձր գնահատականներ է տալիս Եղիշեի, Փարպեցու, Խորենացու պատմություններին:

Գրական-մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի միջև եղած սերտ կապի բացահայտումը, գեղարվեստականության սկզբունքը հին գրականության արժեքների գնահատման հարցում, պատմական հայացքը լեզվի զարգացման ընթացքի վերաբերյալ թեև նորություններ էին հայ հին գրականության պատմագրության մեջ, սակայն Փափազյանին չի հաջողվել ձեռքազատվել իր նախորդներին յուրահատուկ շարադրանքի սխեմատիզմից, թուլցիկությունից:

Միջնադարի գրականության բնորոշ և կարևոր առանձնահատկությունը համարելով գրականության մեջ աշխարհիկ բովանդակության ու լեզվի թափանցումը, Փափազյանը բերում է աշխարհիկ ստեղծագործությունների մի ամբողջ շարք, որ աչքի է ընկնում իր բազմաժանր բնույթով: Նա տեսել է պատմական նշանակություն ունեցող գրական իրադարձությունների բուն իմաստը, որ թաքնված էր մնացել նրա ժամանակակիցներից շատերի համար: Հավատարիմ իր սկզբունքին, Փափազյանը մեր գրականության այս ժամանակահատվածը քննում է մշակույթի պատմական դարգացման ընթացքի մեջ, այդ ընթացքի առանձնահատկություններով բացատրելով նրա առաջացումն ու ծաղկումը միջին դարերում: Հանձինս տաղերգուների, նա տեսնում է ոչ միայն աշխարհիկ բովանդակության արտահայտիչների, այլև ժանրի ապագա ուղին նախանշողների:

Օգտագործելով իր նախորդ և ժամանակակից ուսումնասիրողների հավաքած նյութը, հանգամանորեն քննելով միջնադարյան քնարերգությունը, Փափազյանն արժեքավորեց և բարձր գնահատական տվեց նրա տաղանդավոր ներկայացուցիչների ստեղծագործություններին: Փափազյանն էր նաև, որ առաջինը նկատեց աշխարհիկ ոգու ներթափանցման հետ միասին ևս մի հատկանշական երևույթ՝ սոցիալական մոտիվների ուժեղ արտահայտությունը:

Նոր գրականության ստեղծումը կապելով XVII դ. առաջ եկած լուսավորական խմորումների հետ, Փափազյանը, հավատարիմ իր սկզբունքին, գրական խոշոր իրադարձությունները բացահայտում և պայմանավորում է պատմա-հասարակական կյանքի նախադրյալներով:

Փափաղյանի «Պատմություն» արժեքավոր կողմերից է Մխիթար Սեբաստացու և Մխիթարյանների գործունեության զնահատությունը: Հակառակ եղած կարծիքների, որոնք Մխիթարյանների գործունեության մեջ տեսնում էին միայն ու միայն կրոնական միտումներ, կամ նեղացնում էին նրանց գործունեության շրջանակները կրոնական սխուլաստիկայի և զրաբարի պատերում, Փափաղյանը, զարգացնելով Մ. Նալբանդյանի տեսակետը, զնահատել է նրանց հոանդը, որոնց միտքը, անհանգիստ, պրպտող դիտնականների ջանասիրությունը: Մխիթար Աբրայի «տոկուն, համառ և տքնաջան աշխատության... փայլուն վկա և զլուխ-գործոց» է համարում նա «նրա անմահ մնացող» աշխատությունը՝ «Հայկաղյան բառարանը»: «Հայոց լեզվի առաջին բառարանն է դա, — գրում է նա, — դժվար չէ երևակայել անշուշտ, թե որքան դժվարին գործ է առաջին անգամ կազմել մի լեզվի բառարանը, այն էլ այնքան բարեխղճորեն և մանրակրկիտ»⁴: Փափաղյանը հատուկ ուշադրություն է նվիրում Մխիթարյանների բանասիրական և զրական գործունեությանը: Խոսելով Ա. Բազրատունու «Հայկ Դյուցազն» պոեմի մասին, հատկանշական է համարում նրա «բանաստեղծական շքեղ, հարուստ ոճը»: Վերջացնելով իր խոսքը Մխիթարյանների մասին, Փափաղյանը չի մոռանում նշել նրանց «Բազմավեպ» և «Հանդես ամսօրյա» պարբերականները, որպես հայագիտական կարևոր հրատարակություններ:

«Պատմության» ինքնատիպ էջերից է հետագա դարերի հայ բանասիրության և աշուղական պոեզիայի բնությունը: Փափաղյանը հակված չէ նեղացնելու ժողովրդական ստեղծագործության սահմանները՝ այնտեղ տեսնելով միայն սիրո և կնոջ զեղեցկության գովքը: Այդ նկատառումով էլ նա «աշուղների նահապետ» Սայաթ-Նովային անվանում է «հայ նոր զրականության լավագույն գրող-երգիչներից մեկը»: Սա Սայաթ-Նովայի ստեղծագործության զնահատման ճիշտ և նոր ելակետ էր, որ թարմությանը է հնչում նաև այսօր:

XIX դարի սկզբին նոր թափով է զարգանում նաև զրավոր զրականությունը: Այս երևույթը պայմանավորող նախադրյալների շարքում Փափաղյանն ամենից առաջ նշում է Արևելյան Հայաստանի Ռուսաստանի տիրապետության տակ անցնելու փաստը⁵: Այս շրջանի զրական գործիչներից նա առանձնացնում է Սերովբե Պատկանյանին և Հովհան Վանանդեցուն, վերջինիս անվան հետ կապելով ազգային հայրենասիրական ուղղության սկզբնավորումը հայ նոր զրականության մեջ: Սլամդարյանի ստեղծագործության բնորոշ կողմերից է դիտված զգացմունքայնությունը: Մևսուպ Բաղիադյանը դիպուկ կերպով բնութագրում է իբրև «չղուտ զրագետ...», հպարտ ոգով ու աներկուն բնավորությամբ մի անձ՝ երգիծանքը բերնին, ողբի տեղ ծաղրը, վշտակոծության փոխարեն կծու հեգնանքը զրչից կախո⁶:

Փափաղյանի պարբերացման նորագույն շրջանը սկզբնավորվում է հաշատուր Աբովյանի գերծննեությամբ: Նա պատմականորեն ճիշտ է բնութագրում մեծ լուսավորչին՝ հանգամանորեն կանգ առնելով այն նախադրյալների վրա, որոնց բարերար ազդեցության տակ գործեց «ռուսահայ նորագույն աշխարհիկ զրականության առաջին մեծ տաղանդը, ժողովրդի լեզվով գրող ու ժողովրդի մասին խոսող առաջին վիպասանը»⁷: Փափաղյանը շեշտում է Աբովյան-առաջամարտիկի դերը և նրա մեծ ազդեցությունը զրականության հետագա ընթացքի վրա: «Աբովյանին ղեկավարող զաղափարը, այն է՝ գրել ժողովրդի խոսակցական լեզվով և ժողովրդի կյանքից, արդեն վաղուց ուներ իր հետևորդներն ու պաշտպանները, բայց պետք էր մի գորեղ տաղանդ, մի ցնցող ուժ նրան հաղթանակել տալու համար. «Վերք Հայաստանին» ըստ ամենայնի, զերազանցորեն կատարեց այդ դերը և մի անգամից զրավեց ասպարեզը՝ հաղթական քայլերով»⁸: Հետաքրքրական և ուշադրության արժանի է Փափաղյանի պատմականորեն ճիշտ մոտեցումը այս հարցին: Այսխարհարարի հաղթանակը նա միայն Աբովյանին չի վերագրում, տեսնում է նրա համախոհներին, որոնք փոքր դեր չկատարեցին այն պայքարում, որի գրոշակակիրը եղավ Աբովյանը:

«Պատմության» էջերում կարևոր տեղ է տրված Հայաստանից հեռու դնելով կուլտուր-լուսավորական օջախների գործունեությանը: Խոսելով հայերի լուսավորության գործում Դուրպատի համալսարանի կատարած խոշոր դերի մասին, նա ընդգծում է այն հանգամանքը, որ դեպի տարբեր գիտություններն ու եվրոպական առաջադիմությունն ունեցած հետաքրքրության հետ միասին,

⁴ Նույն տեղում, էջ 285:
⁵ Նույն տեղում, էջ 321:
⁶ Նույն տեղում, էջ 327:
⁷ Նույն տեղում, էջ 335:
⁸ Նույն տեղում, էջ 351:

համալսարանի միջավայրն արթնացնում էր բուռն սեր դեպի հալածվածները, «դեպի այն ամենը, ինչ որ հայրենական է և ազգային»⁹։

Մեր գրականագիտությունը բաղմիցս նշել է Փափազյանի քննադատական հայացքներում գրականության դեմոկրատական ուղղության արժեքավորումն ու գնահատումը։ Փափազյանը ճիշտ է հասկացել ու ներկայացրել այդ ուղղության դերն ու նշանակությունը ոչ միայն դրական կյանքում, այլև հասարակական-քաղաքական առումով։ XIX դ. 60-ական թթ. գրականության երկու խոշոր դեմքերի՝ Մ. Նալբանդյանի և Ստ. Նազարյանցի ստեղծագործության և հասարակական գործունեության քննությունը դրա լավագույն ապացույցն է։ «Պատմության» այդ էջերը ոչ միայն գաղափար են տալիս Ստ. Նազարյանցի և Մ. Նալբանդյանի գրական գործունեության մասին, այլև ներկայացնում են նրանց որպես խոշոր հասարակական գործիչներ։ Մանավանդ կարևոր է Նալբանդյան-քաղաքական գործչի պատկերումը, որի շնորհիվ առավել ամբողջական է դառնում մեծ հեղափոխական դեմոկրատի ստեղծագործական նկարագիրը։ Բարձր գնահատելով Ստ. Նազարյանցի ջանքերը «Հյուսիսսփայլի» հրատարակման գործում, Փափազյանը շեշտում է այն հանգամանքը, որ շնորհիվ Նալբանդյանի «Հյուսիսսփայլը» ստանում է կրթոտ գաղափարական ուղղություն։ Նալբանդյանը ներկայացվում է որպես իր ժամանակի հասարակական, քաղաքական պայմանների արդյունք։ Այդ կապակցությամբ հիշատակվում են Ղրիմի պատերազմն ու նրա բացած «փլվածքները... ուս մտքի և կյանքի շուրջը քաշած պարիսպների մեջ»։

Աշխարհաբարի հետ գրականությունը ստանում է նոր բովանդակություն։ Փափազյանը ժամանակի ամենախոշոր և բնորոշ երևույթ է համարում Ռաֆայել Պատկանյանի ստեղծագործությունը, հատկապես բարձր գնահատելով նրա վերջին շրջանը։ Խոսելով Պատկանյանի աշխարհայացքի մասին, Փափազյանն իրավացիորեն նշում է նրա տատանումները պահպանողականության և ազատամտականության միջև։ Նա կարողացել է ճիշտ ներկայացնել նաև Պատկանյանի ստեղծագործական վերելքներն ու վայրէջքները՝ կապված ժամանակի հասարակական-քաղաքական իրադարձությունների հետ։

Խոսելով XIX դ. 70-ական թթ. թատրոնի և թատերգության մասին, Փափազյանը մի ակնարկով ներկայացնում է հայ թատրոնի պատմությունը՝ սկսած Արտավազդ թագավորից մինչև նշված ժամանակաշրջանը։ Նոր թատերգության ընթացքը բաժանելով երկու ճյուղերի՝ պատմական և կենցաղային, Փափազյանը հետաքրքիր դիտողություն է անում կենցաղային թատերգությունների առավել կենսունակության մասին՝ որպես կյանքի ռեալիստական պատկերման առաջին նախափորձեր։ Սակայն նա միաժամանակ նշում է, որ դրանց մեջ չկա «հյուսվածքի և հինվածքի (կանվա) վարպետություն և, մանավանդ, գաղափարի մեծություն։ Բոլոր մինչև այդ գրված կենցաղական պիեսները ժողովածուներ էին տիպերի և լուսանկարչական նկարների՝ ներկված ծաղրաշարժ և վառ, հաճախ անբնական գույներով։ Պակասում էր գեղարվեստական այն շունչը, որ կյանք է տալիս պատկերներին։ Ահա այդ իսկ խոշոր պակասությունն էր, որ լրացնելու եկավ մի տաղանդավոր թատերագիր՝ Գաբրիել Սունդուկյանը»¹⁰։

Ինչպես տեսնում ենք, հենց սկզբից Փափազյանը ճիշտ է բնութագրում և արժեքավորում Գ. Սունդուկյանի ստեղծագործությունը։ «Պեպոն» դիտվում է որպես «եզակի» երևույթ հայ թատերգության մեջ։ Փափազյանը բարձր է գնահատում Սունդուկյանի՝ տիպեր կերտելու վարպետությունը, պիեսի գաղափարական հագեցվածությունը։

Բաֆֆու ստեղծագործության քննությունը Փափազյանի «Պատմության» փայլուն էջերից է։ Հեղինակը ի հայտ է բերել գրականագետ-քննադատի տաղանդ։ Լուրջ դիտողություններն ու ճիշտ որակումները թույլ են տվել գծելու մեծ վիպասանի ստեղծագործության ուղին, ինչպես նաև բացահայտելու նրա աշխարհայացքի և մեթոդի առանձնահատկությունները։ Փափազյանը ցույց է տվել Բաֆֆու ազդեցությունն ու նշանակությունը հայ գրականության պատմության մեջ, նրա մեծ դերը պատմավեպի ժանրի հետագա զարգացման ճանապարհին։

Քննելով Բաֆֆու աշխարհայացքն ու նրա ստեղծագործության հասարակական-քաղաքական ուղղությունը, Փափազյանը դրանց գաղափարական ակունքները տանում է մինչև Նազարյանց — Նալբանդյան ու նրանց «Հյուսիսսփայլը»։ «Ինչ որ քարոզել էր «Հյուսիսսփայլը» և ինչ կրակոտ կերպով շեշտում էր «Մշակը», նույնը վեպերով արժարժում էր և կենդանացնում Բաֆֆին»¹¹, — գրում է Փափազյանը։ Հետաքրքրական են նրա դիտողությունները Բաֆֆու գրական ուղղության և այդ կապակցությամբ՝ ռոմանտիզմի մասին։ Խոսելով Բաֆֆու ստեղ-

9 Նույն տեղում, էջ 360։

10 Նույն տեղում, էջ 438—439։

11 Նույն տեղում, էջ 459։

ծագործության ուսուցողական և անհատական մասին, Փափազյանը այդ ուսուցողական մասնաբաժնի համարում է միջոց՝ ավելի ցայտուն դարձնելու համար հեղինակի գաղափարախոսությունը հոգուտ ստեղծագործության ղեկավար սկզբունքի:

Առանձին գրողների դիմանկարների մեջ ճիշտ բնութագրելով նրանց որոշակի գրական դպրոցի պատկանելիքը, Փափազյանը անհետևողականություն է հանդես բերում գրական ուղղություններն իրենց ամբողջության մեջ ներկայացնելիս և ընդհանրացում կատարելիս: Այսպես, Երիցյան, անընդունելի է ուսմանտիկական ուղղության գործերին նրա տված որակումը՝ «...ժամանակի ազդակներ, այս ու այն ձևով կրկնվող ու ծամծմվող միտումնավոր, անճաշակ ճիշտ»¹²:

XIX դ. 70—90-ական թթ. հայ հասարակական կյանքը մի յուրօրինակ պատկեր է ստացել Փափազյանի «Պատմության» էջերում: Գրականության պատմաբանը, խոսելով այս շրջանի մասին, տեղին է համարում անդրադառնալ նախորդ տասնամյակների ռուս հասարակական կյանքի իրադարձություններին, որոնք անհերքելի ազդեցություն էին թողել հայ հասարակական մտքի զարգացման վրա: Այդ իրադարձություններից նա հատկապես մեծ նշանակություն է տալիս 40-ական թթ. ռուս գրականության մեջ ձևավորված և մեծ դեր խաղացած արևմտականներին (западники) և սլավոնականներին (славянофилы): Փափազյանն այստեղ հանդես է բերել երևույթների էության մեջ թափանցելու ունակություն: Նա միանգամայն իրավացի է, երբ փորձում է հայ հասարակական կյանքի իրադարձությունները կապել ռուս առաջադեմ մտավորականների գործունեության ու նրանց արտահայտած գաղափարների հետ: Հայ իրականության մեջ ռուսական մտքի խոշոր դերն ու ազդեցությունը անժխտելի են: Սակայն Փափազյանը հայ իրականության ու հասարակական կյանքին է վերագրում երևույթներ, որոնք ունեին անպայմանորեն իրենց ազգային-տեղական առանձնահատկությունները և միայն ռուսական ազդեցությամբ չէր, որ տեղ էին գտել հայ մտավորականության կյանքում: Իհարկե, Փափազյանը նկատում է որոշ տարբերություններ ոչ միայն ռուս և հայ նույնանման կուսակցությունների, այլև հայ կուսակցությունների պայքարի տարբեր ժամանակամիջոցների միջև, բայց սովորաբար հիմնականում անտեսվել են այդ պայքարի ազգային, ինքնատիպ բնույթն ու առանձնահատկությունները:

Փափազյանի գրականագիտական հմտության մասին է խոսում իր ժամանակակից գրողների ստեղծագործությունների հիմնականում ճիշտ գնահատումը: Հայտնի փաստ է, որ գրողի ստեղծագործության արժեքն ու նրա դերը գրականության պատմության մեջ միշտ չէ, որ ըստ արժանվույն գնահատվում են նրա ժամանակակիցների կողմից: Շատ հաճախ գրողին հասկանալու և արժեքավորելու համար պետք են լինում տարիներ, որոնց հեռվից ավելի պարզ ու որոշակի են դառնում գրողն ու նրա գործի նշանակությունը: Փափազյանը ուներ գրականագետի ու քննադատի համար շատ կարևոր ու հազվագյուտ հատկություն: Նա կարողանում էր ճանաչել, արժեքավորել ու փայլուն ապացույցներ առկա դրույթներով արվեստագետների, որոնք իրենց առաջին ստեղծագործական քայլերն էին կատարում: Այդպես էր, որ նրա «Պատմության» էջերում իրենց արժանի տեղը գրավեցին Շիրվանզադեն ու Նար-Դոսը, Հովհ. Հովհաննիսյանն ու Տերյանը, Լ. Հակոբյանն ու Ե. Կուրդիյանը: Շիրվանզադեի ստեղծագործությամբ նա պայմանավորել է գրական մի ամբողջ շրջանի՝ քննադատական ուսուցիչի («իրապաշտական ուղղության») սկզբնավորումն ու զարգացումը: Փափազյանը գրականության ընթացքի մեջ ճիշտ տեղ է հատկացրել նաև Հովհ. Հովհաննիսյանի ստեղծագործությանը, բնութագրելով նրան որպես «ռուսահայ նորագույն բանաստեղծական գրականության սյուներից մեկը»: Նա բանաստեղծի անարբերությանը բնորոշ թախծալի տրամադրության մեջ տեսնում է ժամանակի «հասարակական ցավերի» արտահայտությունը: «Ժամանակի վշտի» արձագանքը ավելի «անկեղծ ու խորունկ շնչով» է դիտված Հովհ. Բուսանյանի ստեղծագործության մեջ: Գրականության պատմաբանը նուրբ դիտողականություն և հմտություն է հանդես բերել մեծ բանաստեղծի ստեղծագործությունը ներկայացնելիս: Ըմբռնված ու խորապես դիտակցված են Բուսանյանի աշխարհը, նրա ստեղծագործության առանձնահատկությունները: Բանաստեղծի անձնական խոհերին հաճախ դիտվում են նրա երգերում հնչող հասարակական վշտի արտահայտությունները, և որ կարևորն է՝ «համաշխարհային թախծին մոտեցող խաղեր ևս»: «Այսպես օրինակ,—գրում է Փափազյանը,— նրա դայրույթի կանչը, անիրավությունների և շարի դեմ ըմբոստությունը, ճնշումների և հարվածների մասին արած անկեղծ բողոքները շունչն... գուտ ցեղային արտահայտություններ, այլ արդյունք են ավելի լայն մտածողությունների և ընդգրկում են ընդարձակ

¹² Նույն տեղում, էջ 517:

սահմաններ»¹³։ Փափազյանը միաժամանակ ընդգծում է բանաստեղծի՝ իր հայրենի եզերքին կապող կարոտն ու սերը։ Թումանյանի տիեզերական թախծի հիմքում նա տեսնում է հայրենիքի ցավերը, «հայոց վիշտը»։

Փափազյանի «Պատմության» էջերում տեղ են գտել մի շարք այլ բանաստեղծներ, որոնք թեև մնայուն արժեքներ չեն թողել, սակայն ինչ որ շափով լրացնում են ժամանակի գրական կյանքի ամբողջական պատկերը։ Խոսելով այդ «ոտանավոր գրողների» մասին, Փափազյանը զարմանալի հեռատեսությամբ նրանցից առանձնացնում է գրականության մեջ դեռևս իր առաջին քայլերը կատարող Դ. Դեմիրճյանին, որի դրվածքները համարում է «տաղանդավոր», իսկ նրան՝ «հույսեր տվող» գրող։

Ավ. Բազակյանի ստեղծագործության վերլուծությունը «Պատմության» էջերում մի ավելորդ ապացույց է այն բանի, թե որքան խորն էր հասկանում ու զգում Փափազյանը իսկական գրականությունը՝ մասնավորապես պոեզիան։ Բանաստեղծի առաջին երգերից սկսելով, նա քայլ առ քայլ մտնում է Բազակյանի ստեղծագործության խորքերը, դուրս բերում այնտեղից մարգարիտներ, հոգեբանական գեղեցիկ անցումներով բացելով ընթերցողի առաջ բանաստեղծի ներաշխարհը։

Բարդ և բազմազան էր 1900-ական թթ. հայ գրականության պատկերը։ Շիրվանզադեի ունալիստական վեպերի կողքին երևում էին Մուրացանի ու մանտիկական շնչով հագեցած ստեղծագործությունները, գյուղագիրները փայփայում էին «մոռացված աշխարհը» փրկելու հույսեր։ Միատարր ու միահնչուն չէր նաև այդ տարիների պոեզիան։ Գրականության պատմաբանին հաջողվել է լայնահայաց կերպով ընդգրկել ու ճիշտ արժեքավորել ամենատարբեր գրողների ստեղծագործությունները։ Մեր բանաստեղծության ապագա դասականների կողքին նա ժամանակին տեսել ու գնահատել է նաև պրոլետարական գրականության հիմնադիրներ Լ. Հակոբյանի և Շ. Կուրդինյանի ստեղծագործությունները։ Ի դեպ նշենք, որ Փափազյանի «Պատմության» էջերում է, որ առաջին անգամ խոսվել է այս հեղինակների մասին։ Գրականության պատմաբանի կողմից խորապես գիտակցված է այսպիսի մոտեցումը։ Նրանց երկերը Փափազյանի կողմից դիտվում են իբրև «նոր բնավորություն» ունեցող, «նոր եղանակներ», «նոր ներդաշնակությամբ» և, որ կարևորն է, նոր դադափարախոսությամբ՝ հոգուտ ճնշվող, հարստահարվող դասակարգի»¹⁴։

Թեև արևմտահայ գրականության քննությունը առանձին բաժին է կազմում «Պատմության» մեջ, բայց Փափազյանը չի անջատում միմյանցից մեր գրականության երկու հատվածների պատմությունը։ Նա քննում է դրանք իրար կողքի՝ որպես մի միասնական գրական պրոցեսի արտահայտություն։ Հակառակ գրականության մյուս պատմաբանների (Լեո. Արփիարյան, Աճառյան), Փափազյանը ընդհանուր շատ եզրեր է տեսնում այդ հատվածների գրական շարժման մեջ, իսկ տարբերությունները վերագրում է պատմա-հասարակական, քաղաքական պայմաններին։ Գրականության ընթացքը քաղաքական-հասարակական կյանքի իրադարձություններին աղերսված քննելու սկզբունքին հավատարիմ, Փափազյանը արևմտահայ գրական գործիչներին ներկայացնում է համապատասխան հասարակական միջավայրում։ Սակայն պետք է նշել, որ գրականության պատմության այս էջերը անհամեմատ սխեմատիկ են։ Բավական է ասել, որ XIX դ. 50—60-ական թթ. արևմտահայ գրականության մեջ Փափազյանը հակված է տեսնելու առավելապես հրապարակախոսություն, այնինչ այդ տարիներին էր ձևավորվում արևմտահայ վեպը։ Ա. Հայկունու, Խ. Հիսարյանի գործերը թեև չէին բավարարում բարձր գեղարվեստական ստեղծագործության պահանջները, սակայն որպես վեպի առաջին փորձեր, անշուշտ, ուշագրավ երևույթներ էին։ Փափազյանը բավարարվում է միայն նշելով դրանք՝ իբրև «բացառություններ», առանց անուններն անգամ հիշատակելու։

Աշխատության հետագա էջերում քննվում են առավել նշանակալի հեղինակների գործերը։ Սակայն այստեղ ևս բացակայում է գրականագիտական ղեկավար սկզբունքը, ավելի հաճախ են նկատվում ներքին խախտումները։ Այսպես, գեղարվեստական գրականության վերլուծությունը սկսելով Պեշկեթաշյանից, անդրադառնալով Դուրյանի, Ալիշանի, Արփիարյանի և այլոց գործերին, նա հասնում է մինչև իր օրերը, քննում նաև իրեն ժամանակակից Զ. Նսայանի, Ա. Զուպանյանի ստեղծագործությունները և հանկարծ նորից վերադառնում է 60—70-ական թթ.՝ Հակոբ Պարոնյան և երգիծական գրականություն։ Անշուշտ այսպիսի մոտեցումը որոշակի սխալմի բացակայության արդյունք է, որը և որոշ շափով ազդել է «Պատմության» ընդհանուր մակարդակի վրա։ Չնայած դրան, «Պատմության» արևմտահայ բաժինը ևս ուսանելի շատ նյութ է տալիս գրականությունն ուսումնասիրողին։ Առանձին հեղինակների ստեղծագործական նկարագրերը կատարված են բա-

13 Նույն տեղում, էջ 559։

14 Նույն տեղում, էջ 580։

րեխղճությամբ, Փափազյանը կարողացել է ավարտուն ձևով ներկայացնել այնպիսի բարդ ու ինքնատիպ հեղինակների, ինչպիսիք են Գ. Զոհրապյան ու Օննիկ Զիֆթե-Սարաֆը, Ա. Զոպանյանն ու Ս. Պարթևյանը, Մեծարենցը, Սիսմանթոն, Ռ. Զարդարյանը և շատ ուրիշներ: Արևմտահայ հատվածի դրականությունը նա համարում է նույնքան բնաշխարհիկ ու իր ակունքներով ազգային, որքան և արևելահայը, այդ տեսակետի ճշտությունը ապացուցելով այնպիսի հեղինակների գործերի վերլուծությամբ, ինչպիսիք էին Ղևոնդ Ալիշանը, Գարեգին Սրվանձտյանցը և ուրիշներ:

Փափազյանին հաջողվեց դրականության ընթացքի մեջ տեսնել և ըստ արժանվույն գնահատել այնպիսի մի խոշոր և ինքնատիպ դրական երևույթ, որպիսին էր XX դարի սկզբի արևմտահայ բանաստեղծությունը: Ընդհանուր առմամբ այդ շրջանի արևմտահայ բանաստեղծների տեղը պրականության մեջ, թափանցելով գեղարվեստական մտածողության խորքերը, «Պատմության» հեղինակը կարողացել է ընթերցողին ներկայացնել նրանցից յուրաքանչյուրի ուրույն ստեղծագործական պատկերը:

Միսաք Մեծարենցի ստեղծագործությունը դրականության պատմաբանին հիշեցնում է վաղամեռիկ Դուրյանին: Զուգահեռներ գտնելով երկու տաղանդավոր բանաստեղծների կյանքի և գործի մեջ, Փափազյանը միաժամանակ իր վերլուծությամբ կարողանում է ի հայտ բերել այն ինքնատիպ կողմերը, որ հատուկ էին Մեծարենցի ստեղծագործությանը: Նա բացահայտում է նաև Մեծարենցի սիմվոլիզմի արմատները: Անհուն սերը դեպի կյանքը՝ պարուրված բնության պաշտամունքով, խոր հակասությունը նրա երազների ու իրականության միջև, ազդեցությունը Մետերլինկից, Վերհարնից, ինչպես նաև արևելյան բանաստեղծներից, «այդ բոլորը—միաձուլումը եվրոպական սիմվոլիզմի և միստիցիզմի՝ արևելյան գունագեղ ոճի, աննմանորեն վառ վրձնի շարժումների հետ—առաջ էր բերում մինչև այդ հայ դրականության մեջ բանաստեղծության շտեմնված մի սեռ»¹⁵:

«Գրականության պատմության» լավագույն հատվածներից է Սիսմանթոյի ստեղծագործության քննությունը: Փափազյանը Սիսմանթոյին համարում է նորարար, նոր համարելով թե՛ նրա գրելաձևը, «զգալու եղանակը և թե՛ երևակայությունը»: Սիսմանթոյի ստեղծագործությունը ներկայացվում է իբրև մի խտացված արտահայտություն այն սարսափների, սոսկումների, որ իջել էր հայ իրականության վրա դարասկզբին: Հայրենասիրություն, ժողովրդի անհամար տառապանքներից ծնված խոր վիշտ, ապա և «հույսի վերակոչող ու կատաղի վրիժառության հորդորներ», — ահա այն հիմնական գաղափարները, որ ընդգծվում են Փափազյանի կողմից: Գրականության պատմաբանը շրջադարձային երևույթ է համարում բանաստեղծի ոճը: «Երգիչը, — գրում է Փափազյանը, — իր բառերն ու արտահայտությունները վերցնում է արյունով լվացված դաշտերից, հրդեհի բուցերով կարմրած տարածությունից, որ հողին սոսկումով լցրած՝ ավերակների ու գերեզմանների վրացից անցնում է արյունոտ աչքերով, տանջվում է, մոռնում, այրվում է, ճշում, մարտակոչ ազդակներ հնչեցնում խուպուտ, զարհուրելի որստումներով և յուրաքանչյուր սողի մեջ ունի մահ, արյուն, կտտանք, կոտորած, ավեր...»¹⁶:

«Պատմության» և՛ արևելահայ, և՛ արևմտահայ դրականության բաժիններում Փափազյանը չի սահմանափակվում միայն գեղարվեստական գրականության ուսումնասիրությամբ: Ժամանակի հասարակական-քաղաքական կյանքին անդրադառնալով, նա քննում է այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել այս կամ այն գրողի աշխարհայացքի ձևավորման և նրա ստեղծագործության գաղափարական բովանդակության արտահայտման համար: Ավելին, Փափազյանը գրականության դարգացումը դիտում է մշակույթի և դիտության ճյուղերի հետ ունեցած սերտ կապի մեջ: Նրա «Պատմության» էջերում խոսվում է հրապարակախոսության, պատմության, ազգագրության, լեզվաբանության, փիլիսոփայության, թարգմանական գրականության առավել աչքի ընկնող դեմքերի մասին: Ժամանակի մշակութային կյանքը լրիվ ներկայացնելու նպատակով նա անդրադարձել է նաև թատրոնին, նկարչությանը, երաժշտությանը:

«Պատմության» ինչպես արևելահայ, նույնպես և արևմտահայ գրականության բաժինները ավարտվում են վերջաբաններով: Փափազյանը վստահ հույս է հայտնում, որ գրականության ապագան կլինի առավել գեղեցիկ. «Կյանք, կծնեն նոր ուժեր, գուցե մտքերի և ուղղությունների հեղաշրջման ազդեցության տակ ասպարեզ կիջնեն նոր տաղանդներ, կզարգանան նոր հոսանքներ, և XX դարը ուստահայ գրականության պատմության մեջ կարող է բացվել մի նոր էջով...»¹⁷:

¹⁵ Նույն տեղում, էջ 768:

¹⁶ Նույն տեղում, էջ 782:

¹⁷ Նույն տեղում, էջ 632: